Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԿԶ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 16. Կոտայքի մարզ - 2 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024 – 31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04 – 30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
14:17:50 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 50 շահառուի Հրազդան և Չարենցավան համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 13 դեպքի վարում՝ նպաստի վերափաստագրման կազմակերպում 8, նոր անձնագրի ձեռք բերման կազմակերպում, անվճար բժշկական հետազոտությունների կազմակերպում, եռամսյակային դրամական աջակցության կազմակերպում, անվճար դեղորայքի ստացում, օժանդակ միջոցների ստացման կազմակերպում:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 1 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 2 միջոցառում՝ Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի ներկայացուցիչներին «Նուարդ» տիկնիկների ցուցադրություն, որին մասնակցել է 1 շահառու, ծննդյան օրվա նշում 1 շահառու:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 50 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 50 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 25 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք, 8 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 18 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, թվով 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ,4 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է բժշկական քարտից քաղվածք, 1 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին, իրականացրել է միջմկանային ներարկում 1 շահառուի համար:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Մասնակցություն միջոցառումներին (տե՛ս հետևյալ հղումը՝ https://shorturl.at/ek056, https://shorturl.at/emxwr ),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով՝

- ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և բարդ դեպքերի ուսումնասիրություններ,
- կենտրոնի պատասխանատուն եւ սոցիալական աշխատողը մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Սոցիալական դեպքի վարում» թեմայով դասընթացին,
- Կազմակերպության աշխատակիցները մասնակցել են իրենց համայնքների ՄՍԾՏԿ-ում գործող համակարգող խորհրդի նիստերին,
- Հրազդանի կենտրոնի պատասխանատուն մասնակցել է հոգաբարձուների խորհրդի նիստերին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 49/47 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 41 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 39 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 5<br>Բ – 42 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 49 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 49 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 49 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 2 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 2 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) Հոգեբանական աջակցություն | 1 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)